**Արձանագրություն N 2**

ՀՀ քննչական կոմիտեի կողմից դյուրակիր համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԴՀ-22/2 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

22 նոյեմբերի 2022թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյան, Վ. Անդրեասյան, Ս. Գարանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

***1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ***

| ***Չափաբաժնի համարը*** | ***Չափաբաժնի անվանումը*** | ***Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)*** |
|---|---|---|
| 1 | դյուրակիր համակարգիչներ | 54 600 000 |

***2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ***

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 18.11.2022թ.-ին ժամը 14:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 21.11.2022 թ.-ին ժամը 14:00-ին:

***3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.***

| **Հ/հ** | **Մասնակիցների անվանումները** | **Հասցեներ** |
|---|---|---|
| 1 | էս Յե Թրեյդ ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00220381, ք.Երևան Դավիթ Անհաղթ Փ. 6շ բն 165 հեռ. 095 59-01-11, arturtender@mail.ru |
| 2 | Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի | ՀՎՀՀ՝ 27959977, Ք. Երևան,Շիրազի փ. շ.6/5, հեռ.099-50-50-60, arturtender@mail.ru |

***4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ***

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԴՀ-22/2 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

***5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին***

**eauction.armeps.am համակարգի միջոցով հարցումներ և պատասխաններ չեն եղել.**

## *6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ*

| Չ/հ | Չափաբաժնի անվանումը | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | դյուրակիր համակարգիչներ | 1.Էս Յե Թրեյդ ՍՊԸ | 54 600 000 | 55000000 | 20 % | 66000000 | 45045000 | 20 % | 54 054 000 | |
| | | 2.Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի | | 45500000 | 20 % | 54600000 | 45500000 | 20 % | 54 600 000 | |

Աճուրդն ամփոփվել է 21.11.2022**թ.-ին** և Համակարգի կողմից

- 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **էս Յե Թրեյդ ՍՊԸ-ն:**

### *7. Համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին տվյալներ*

**7.1** Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ Համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **էս Յե Թրեյդ ՍՊԸ-ի** հայտում առկա է անհամապատասխանություն՝ մասնակիցը, համաձայն հրավերի 7.1 կետի, պետք է սահմանված կարգով ներկայացներ հայտի ապահովում, սակայն հայտի ապահովում չի ներկայացվել:

**7.2** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1-ին չափաբաժնի մասով Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **էս Յե Թրեյդ ՍՊԸ-ի** հայտը չի բավարարում սույն ընթացակարգի հրավերի պահանջներին և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի և սույն ընթացակարգով հրավերի պահանջները.

**Հանձնաժողովը որոշեց.**

Մերժել առաջին տեղ զբաղեցրած մասնակից էս Յե Թրեյդ ՍՊԸ-ի հայտը:

**7.3** ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

**7.4** Հաստատել 1-ին չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի**

**նախագահ՝** ____________ **Գագիկ Արշակյան**

**անդամներ՝** ____________ **Վահագն Մկրտչյան**

____________ **Վահրամ Անդրեասյան**

____________ **Սիլվա Գարանյան**

**քարտուղար՝** ____________ **Սիրուշ Նազարյան**